

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№ 64-Լ

«04» 02. 2021թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի №1552-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2018թ. դեկտեմբերի 17-ի «ՀՀ զինված ուժերում պայմանագրային զինվորական ծառայությունից արձակելու և զինվորական ծառայությունից արձակված զինծառայողներին զինվորական համազգեստ կրելու իրավունք վերապահելու կարգերը սահմանելու, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարի 2002թ. հոկտեմբերի 31-ի № 893 հրամանում լրացումներ կատարելու մասին» № 1552-Լ հրամանի հավելված 1-ում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 3-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «ՊՆ կադրերի և ռազմական կրթության կամ ԶՈՒ ԳՇ կազմակերպչական գորահավաքային կամ կադրերի վարչությունների» բառերը փոխարինել «ՊՆ կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր կամ ԶՈՒ ԳՇ անձնակազմի կառավարման գլխավոր վարչությունների» բառերով,

բ. 3-րդ ենթակետում «նյութերն» բառից հետո լրացնել «՝ անձնական գործի առաջին օրինակի հետ» բառերը,

գ. 9-րդ ենթակետում «համապատասխան» բառից հետո լրացնել «գլխավոր վարչության կամ» բառերը,

դ. 10-րդ ենթակետում «բնակության վայրի զինվորական կոմիսարիատ» բառերը փոխարինել «ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության՝ բնակության վայրի տարածքային ստորաբաժանում» բառերով,

2) 4-րդ կետի 3-րդ ենթակետում՝

ա. «վարչության պետ» բառերը փոխարինել «գլխավոր վարչության պետ» բառերով,

բ. «փոխգնդապետ» բառը փոխարինել «ավագ ենթասպա» բառերով,

3) 4-րդ կետի 4-րդ ենթակետում՝

ա. «վարչությունների» բառը փոխարինել «գլխավոր վարչությունների, վարչությունների» բառերով,

բ. «ՀՀ զինվորական կոմիսարը» բառը փոխարինել «ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության պետը» բառերով,

գ. «մայոր» բառը փոխարինել «ավագ ենթասպա» բառերով,

4) ձև 1-ում «Զինկոմիսարիատը» բառը փոխարինել «ԶԶՀԾՏ ստորաբաժանումը» բառերով,

5) ձև 2-ից 21-ում «Կոտայքի զինվորական կոմիսարիատ», «Արարկիռի զինվորական կոմիսարիատ», «Արմավիրի զինվորական կոմիսարիատ», «Գորիսի զինվորական կոմիսարիատ», «Արարատի զինվորական կոմիսարիատ», «Կապանի զինվորական կոմիսարիատ» բառերը փոխարինել «ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանում» բառերով:

2. ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետին՝

3-օրյա ժամկետում ապահովել սույն հրամանի հրապարակումը ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում:

3. Հրամանը հասցնել ՀՀ ԶՈՒ ԳՇ պետին, ՀՀ պաշտպանության նախարարի և ԶՈՒ ԳՇ պետի տեղակալներին, ՊՆ և ԶՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, զորամիավորումների, միավորումների և զորամասերի հրամանատարներին: